



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 03.10.2018
թվականի թիվ 18-10-09-03 որոշմամբ,
Գիտական խորհրդի 18՝ 02՝ 2019 թվականի
թիվ 19-02-02-01 որոշմամբ հաստատված
փոփոխություններով և լրացումներով

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ օտարերկրացիների ընդունելության հետ կապված հարաբերությունները:

2. Օտարերկրացիների՝ Համալսարան ընդունելությունը կազմակերպվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշման և սույն կանոնակարգի պահանջների համաձայն:

3. Սույն կարգում «օտարերկրացի» եզրույթը կիրառվում է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված հասկացությանը համապատասխան, այն է՝ «օտարերկրացիներ» հասկացության մեջ ներառվում են

Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք):

4. Սույն կանոնակարգով սահմանված ընդունելության կանոնները չեն բացառում օտարերկրացիների, այդ թվում ծագումով հայ օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի դիմորդների համար սահմանված պահանջներին համապատասխան՝ ընդհանուր հիմունքներով ընդունելությանը մասնակցությունը:

5. Սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ■

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

6. Համալսարանում անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կամ բակալավրի կրթական ծրագրերով նախատեսված որակավորման աստիճան ստանալու համար Համալսարան կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ստացել են առնվազն միջնակարգ կրթություն կամ Հայաստանի Հանրապետության առնվազն միջնակարգ կրթության մակարդակին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (ատեստատ, վկայական):

7. Համալսարանում կրթական ծրագրերով նախատեսված մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Համալսարան կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են Հայաստանի Հանրապետության առնվազն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

8. Ընդունելությունը Համալսարանում կատարվում է՝

1) Համալսարանի վճարովի համակարգ՝ պայմանագրային հիմունքներով, Համալսարանի «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով սահմանված ուսման վճարների չափերին համապատասխան.

2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, (անվճար) օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում.

3) Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:

9. Համալսարանում անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կամ բակալավրի կրթական ծրագրերով նախատեսված որակավորման աստիճան ստանալու համար օտարերկրացի դիմորդների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության և գիտելիքների ստուգման, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով կրթություն ստանալու համար՝ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշման համաձայն:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

ՄՏՈՒԳՈՒՄԸ

10. Համալսարանում անընդհատ և ինտեգրված բարձրագույն բժշկական կամ բակալավրի կրթական ծրագրերով նախատեսված որակավորման աստիճան ստանալու նպատակով օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է Համալսարանի կողմից՝ դիմորդների, սույն կանոնակարգով սահմանված առարկաներից քննություններ հանձնելու միջոցով: Քննությունների կազմակերպման և պատշաճ անցկացման նպատակով նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

11. Օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող միջնակարգ հանրակրթական ծրագրի շրջանակներում:

12. Օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում օտար ուսուցման լեզվի և ֆիզիկա, քիմիա կենսաբանություն առարկաներից առնվազն երկուսից օտարերկրացի դիմորդի ընտրությամբ քննություններ հանձնելու եղանակով: Առանձին դեպքերում, հաշվի առնելով օտարերկրացի դիմորդի պետության կողմից ընդունելությանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները, գիտելիքների ստուգումը կազմակերպվում է երեք՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից միաժամանակ՝ Հայաստանում գործող միջնակարգ հանրակրթական ծրագրի շրջանակներում:

13. Սույն կանոնակարգի 12-րդ կետով նախատեսված երեք առարկաներից երկուսից քննություն հանձնելու դեպքերում առարկաների ընտրությունը իրականացվում է օտարերկրացի դիմորդի կողմից ինքնուրույնաբար:

14. Օտար ուսուցման լեզվի գիտելիքների ստուգումն իրականացվում է 50 թեստից կազմված թեստային առաջադրանքի միջոցով: Դրական արդյունք է համարվում 26 թեստերի ճիշտ լուծումը: Անգլերեն լեզվի գիտելիքների ստուգում չի իրականացվում, եթե օտարերկրացի դիմորդի միջնակարգ հանրակրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման գնահատականն անգլերեն լեզվից 100 միավորի դեպքում 65 և ավելի է, իսկ 200 միավորի դեպքում՝ 130 և ավելի:

15. Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից առնվազն երկուսից գիտելիքների ստուգումն իրականացվում է յուրաքանչյուրը 30 թեստից բաղկացած թեստային առաջադրանքների միջոցով: Դրական արդյունք է համարվում յուրաքանչյուր առարկայից առնվազն 16 թեստերի ճիշտ լուծումը: Յուրաքանչյուր առարկայից 12-ից 15 թեստերի ճիշտ լուծման դեպքում ընդունող հանձնաժողովի կողմից դիմորդին առաջարկվում է լրացուցիչ պատասխանել յուրաքանչյուր առարկայի շրջանակը ներառող 10-ական հարցից բաղկացած գրավոր թեստային առաջադրանքի, որոնց մեջ ներառված առնվազն 5-ական թեստերն ճիշտ լուծելու

դեպքում, դիմորդի գիտելիքների ստուգման արդյունքները համարվում են դրական:
(փոփոխություն և լրացում. 18.02.2019, թիվ 19-02-02-01)

16. Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից գիտելիքների ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր առարկայից 20 թեստից բաղկացած թեստային առաջադրանքների միջոցով՝ մեկ քննությամբ: Դրական արդյունք է համարվում երեք առարկաներից միասին առնվազն 31 թեստերի ճիշտ լուծումը, սակայն յուրաքանչյուր առարկայից ոչ պակաս, քան 8 թեստի ճիշտ լուծումը:

Երեք առարկաներից միասին 25-30 թեստերի ճիշտ լուծման (ընդ որում, յուրաքանչյուր առարկայից ոչ պակաս, քան 8 թեստի ճիշտ լուծման) դեպքում ընդունող հանձնաժողովի կողմից դիմորդին առաջարկվում է լրացուցիչ պատասխանել յուրաքանչյուր առարկան ներառող 10-ական հարցից բաղկացած գրավոր թեստային առաջադրանքների, որոնց մեջ ներառված առնվազն 5-ական թեստերն ճիշտ լուծելու դեպքում, դիմորդի գիտելիքների ստուգման արդյունքները համարվում են դրական: *(փոփոխություն և լրացում. 18.02.2019, թիվ 19-02-02-01)*

17. Թեստային առաջադրանքները ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և անգլերեն առարկաներից կազմում են Համալսարանի համապատասխան ամբիոնները:

18. Միևնույն պետությունից օտարերկրացի դիմորդների մեծ քանակի դեպքում հնարավոր է դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացնել դիմորդների պետությունում, ըստ սույն կանոնակարգի՝ Համալսարանի իրավասու ներկայացուցչի միջոցով:

19. Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների բավարարման, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա դիմորդներն ընդունվում են Համալսարանի առաջին կուրս:

20. Գիտելիքների ստուգման արդյունքում սույն կանոնակարգով սահմանված պահանջները չհաղթահարելու դեպքում օտարերկրյա դիմորդին Համալսարանի կողմից առաջարկվում է ուսանել Համալսարանի նախապատրաստական բաժնում:

21. Հետագա ուսուցման լեզվին չտիրապետող օտարերկրացիները պետք է ուսուցման դասընթացն անցնեն Համալսարանի նախապատրաստական դասընթացում:

22. Սույն կանոնակարգով նախատեսված թեստային առաջադրանքներն ներառող թեստերի բովանդակությունը պետք է համապատասխանի Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի կողմից թեստերի կազմմանն առաջադրվող պահանջներին: Թեստային առաջադրանքներն կազմվում են վեց տարբերակով և պահպանվում Համալսարանի օտարերկրացիների ուսուցման դեկանատում՝ մեկ տարի ժամկետով: Թեստային քննաթերթիկում պատասխանի ջնջումը համարվում է չլուծված: *(ըստ 18.02.2019 թիվ 19-02-02-01)*

* * *